

ԶԻՆԿՈՐԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՒՂԻՆԵՐ*

*Զ. Դ. ԱՍԱՏՐՅԱՆ, պահեստագործի գնդապետ, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի «Հայկական բանակ» ՌԳՀ ռազմագիտական խմբագրման բաժնի պետ,
Վ. Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՄՀ «Գիտական տեղեկագիր» ամսագրի գլխավոր խմբագիր, «Հայկական բանակ» ՌԳՀ գիտախորհրդատվական խորհրդի անդամ*



Ներածություն

Պատերազմներն իրենց բնույթով որքան էլ տարբեր լինեն, սակայն դրանց ընթացքի ու ելքի վրա հոգեբանական գործոնի ազդեցությունը չի նվազում: Մարտադաշտում ծավալվող իրադարձություններն իրենց հոգեխցիչ գործոններով զինծառայողի համար վերածվում են

մի յուրահատուկ հոգեբանական դրամայի, և միայն բարձր մակարդակի մարտական ու հոգեբանական պատրաստությամբ է հնարավոր այդ գործոնների նկատմամբ ձևավորել կայուն հակազդեցություն: Ներկայումս սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման հետևանքով մարտական գործողությունները դարձել են ավելի արագընթաց ու շեշտակի, իսկ հարվածները՝ բազմազան ու ճշգրիտ, ինչը մեծացնում է զինծառայողների վրա հոգեխցիչ գործոնների ազդեցության ուժը: Ուստի անհրաժեշտ է հոգեբանական պատրաստման ժամանակ ուշադրություն դարձնել դրա կազմակերպման այնպիսի եղանակների վրա, որոնք զինծառայողներին հնարավորություն տան զարգացնելու ինչպես հոգեկան կայունությունն ու մասնագիտական հմտությունները, այնպես էլ ստեղծագործական մտածողությունը, առաջավարին բնորոշ որակական հատկանիշները, կոլեկտիվում ներդաշնակորեն գործելու ունակությունները:

Հոգեբանական պատրաստման դերը և նշանակությունը

Մասնագիտական գրականության մեջ հոգեբանական պատրաստումը սահմանվում է որպես փոխկապված միջոցառումների համակարգ, որոնք ուղղված են զինծառայողների այնպիսի հոգեբանական որակների ձևավոր-

* Հոդվածն ստացվել է 05.09.2024: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 14.10.2024:

մանը, որոնք ապահովում են մարտի դաշտում ակտիվ և արդյունավետ գործողություններ վարելու հոգեբանական պատրաստություն և զինված պայքարի ժամանակակից միջոցների ներգործության նկատմամբ կայունություն¹: Նշվում է նաև, որ «հոգեբանական պատրաստման հիմնական նպատակը մարտական ստրեստի նկատմամբ վարժեցնովի հակազդման ստեղծումն է, այսինքն՝ զինծառայողի այնպիսի պատրաստումը, որ այդ ստրեստը դառնա նրա գործունեությունը ոչ թե կազմալուծող (արգելակող), այլ խթանող գործոն»²:

Հոգեբանական պատրաստման ժամանակ անհրաժեշտ է վերահսկել զինծառայողների հոգեբանական ծանրաբեռնվածությունը՝ մարտի հոգեծին գործոնների ազդեցության նմանարկմամբ (վտանգ, հանկարծակիություն, անորոշություն, ժամանակի սղություն և այլն), ապա զնահատել հոգեբանական կայունության մակարդակը: Հոգեբանական պատրաստման արդյունավետությունը կախված է ուսումնական պարապմունքներում մարտական իրավիճակների ճշգրիտ մոդելավորումից³:

Ինչպես հայտնի է, ՋՌԻ-ում հոգեբանական պատրաստումը լինում է ընդհանուր, հատուկ ու նպատակային, ընդ որում, այն կարող է իրագործվել և՛ անհատական, և՛ խմբային պարապմունքների ձևով:

Ընդհանուր հոգեբանական պատրաստումն ընդգրկում է բոլոր զինծառայողներին նրանց ամբողջ ծառայության ընթացքում և ուղղված է զինվորական պարտքի կատարման համար բարձր մակարդակի հոգեբանական պատրաստության ձևավորմանը, ժամանակակից պատերազմներում ստրեսսածին գործոնների նկատմամբ հոգեկան կայունության ապահովմանը, զինակիցներին հոգեբանական օգնության ցուցաբերման եղանակների յուրացմանը, կոլեկտիվիզմի զգացողության ու պատասխանատվության ձևավորմանը:

Հատուկ հոգեբանական պատրաստումն անցկացվում է որոշակի զինվորական մասնագիտություններով (հետախույզներ, դիպուկահարներ, կապավորներ, օդաչուներ, սակրավորներ և այլն) ծառայող զինծառայողների հետ՝ զարգացնելով նրանց մասնագիտական գիտելիքները, հմտությունները և կարողությունները:

Նպատակային հոգեբանական պատրաստումն անցկացվում է կոնկրետ մարտական խնդիր լուծելու համար զինծառայողների անհրաժեշտ դիրքորոշումների ձևավորմանը, հոգեկանի ակտիվացմանը, նախատրամադրմանը, հոգեբանական պատրաստության այնպիսի մակարդակի ձևավորմանը, որը հնարավորություն կտա արդյունավետ կերպով լուծելու առաջադրված խնդիրը, առավելագույնս մոբիլիզացնելու իրենց հոգեկան ու հոգեֆիզիոլո-

¹ Տես *А. Г. Караяни, И. В. Сыромятников. Военная психология. М., 2016, с. 237:*

² Տես *Վ. Հ. Մարգարյան, Ակտիվ մարտական գործողություններին զինծառայողների հոգեբանական պատրաստումը՝ որպես պաշտպանությանը պետության պատրաստման կարևոր բաղադրիչ: «ՀԲ», 2009, հմ. 3:*

³ Այդ մասին ավելի հանգամանորեն տես նույն տեղում:

գիական ներուժը և այն ուղղելու մարտական գործողությունների կատարմանը, հոգեկանի ենթագիտակցական շերտում գործարկելու վարքի կարգավորիչները, զարգացնելու մասնագիտական հմտությունները, ինչպես նաև խմբում արմատավորելու սիներգետիկական էֆեկտները⁴:

Մասնագիտական հմտությունը հնարավորություն է տալիս մասամբ ավտոմատացնելու համապատասխան շարժումների և գործողությունների կատարումն ու կարգավորումը: Օրինակ՝ ավտոմատով կրակելիս զինծառայողն իր ուշադրությունը կենտրոնացնում է զուտ թիրախի վրա, ինչը նրան հնարավորություն է տալիս ավելի դիպուկ կրակելու՝ առանց այլ գործողությունների վրա շեղվելու: Այսինքն՝ հմտության շնորհիվ մարտիկի գիտակցությունն ազատվում է տարաբնույթ ստրեսածին գործոնների ազդեցությունից և գործողությունների տեխնիկական բաղադրիչները վերահսկելու անհրաժեշտությունից՝ հնարավորություն տալով ավելի կենտրոնացված, անբռնազբոսիկ, ուստի և արդյունավետ կերպով հասնելու իր գործողության գլխավոր նպատակին⁵:

Զինծառայողների ստեղծարարության անձնային որակի զարգացում

Ժամանակակից զինված բախումների փորձը ցույց է տալիս, որ հակառակորդից ավելի սեղմ ժամկետներում և ավելի որակյալ որոշում ընդունելն ու իրագործելը դառնում են հաջողության հիմնական գրավականը: Ուստի այսօր գերակա խնդիր է զինծառայողների (առաջին հերթին՝ բոլոր մակարդակների հրամանատարների) մտավոր կարողությունների և, հատկապես, դրանց կարևոր բաղադրիչներից մեկի՝ ստեղծարար մտածելակերպի զարգացումը: Նշենք, որ ստեղծարարությունը ինտեգրալ հոգեկան որակ է, որը հնարավորություն է տալիս գտնելու պորբլեմային իրավիճակի սկզբունքորեն նոր՝ ավելի արդյունավետ, լուծումներ, կատարելու հայտնագործություններ, գեներացնելու նոր գաղափարներ, ստեղծելու նոր սարքեր ու սարքավորանք, ինչելու ստեղծագործ, հնարամիտ, սրամիտ ու նախածեռնող⁶:

Ստեղծարարության ձևավորումը մեծ չափով կապվում է ճանաչողական ակտիվության զարգացման հետ, որի համար հիմք են ծառայում ճանաչողական հետաքրքրությունները (հատկապես՝ մասնագիտական), որոնք նպաստում են մտավոր գործունեության ավելի մեծ կենտրոնացմանը, տեղեկույթի ակտիվ որոնմանը, կռահողականության, հետազոտական մոտեցման, խնդիրները լուծելու պատրաստակամության զարգացմանը⁷: Ճանաչո-

⁴ Տես *Ս. Գ. Կարայանի, Ի. Վ. Սիրոմյատնիկով*, Նշ. աշխ., էջ 238–240:

⁵ Այդ մասին տես, օրինակ, *Մ. Ի. Միչурին*. Психологическая подготовка военнослужащих к действиям в экстремальных ситуациях. Электронный научно-практический журнал «Психология, социология и педагогика», 2012, № 12 (<https://psychology.snauka.ru/2012/12/1494>):

⁶ Տես *Մ. Կոզակ*. Творческое мышление. «Вестник психологии» (<https://psychologyjournal.ru/stories/tvorcheskoe-myshlenie/>):

⁷ Տես *Ղ. Բ. Սալոա*. Методические рекомендации по развитию познавательного

դական ակտիվությունը հիմնվում է անձնային, այդ թվում՝ բնածին, որակների վրա: Իսկ դա նշանակում է, որ ռազմական ոլորտում ստեղծարարությունը՝ որպես անձնային որակ, կարելի է զարգացնել ռազմաուսումնական պարապմունքների միջոցով՝ համապատասխան հոգեբանական և մանկավարժական մեթոդների կիրառմամբ:

Ստեղծարարության զարգացումը առաջին հերթին ներքին և արտաքին խոչընդոտների հաղթահարումն է: Այն պահանջում է, նախ, վերացնել իր ուժերի նկատմամբ անվստահությունը, փարատել վախերը, այնուհետև ստացված գիտելիքների ու հմտությունների հիման վրա ձևավորել այն անհրաժեշտ ինքնավստահությունը, որն անձնավորությանը հնարավորություն է տալու իր առջև դրված խնդիրը հաջողությամբ լուծելու անգամ արտակարգ, բարդ ու խճճված իրավիճակներում: Դրա հետ մեկտեղ ինքնավստահությունը չպետք է վերածվի իր անսխալականության ինքնաներշնչման:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ հասարակության մեջ առկա է որոշակի թյուր կարծիք, թե զինվորը միայն հրաման կատարող անձ է, ուստի պարտադիր չէ, որ նա ունենա ստեղծագործական մտածողություն: Դա հետևանք է զինվորական գործունեության վերաբերյալ սխալ կարծրատիպների: Երբեք չի կարելի հրամանի կատարումը հակադրել ստեղծագործական մտածողությանը, քանի որ վերջինս բավական մեծ դեր է խաղում մասնագիտական կարողությունների զարգացման և առաջադրանքների արդյունավետ կատարման առումով, հատկապես՝ առաջադրանքային կառավարման համակարգում⁸:

Հարկ է նշել, որ ստեղծագործական մտածողության զարգացումը հնարավոր չէ առանց տվյալ անձնավորության զուգամետ (կոնվերգենտ) և տարամետ (դիվերգենտ) մտածելակերպի հաշվառման⁷: Զուգամետ մտածողությամբ օժտված սուբյեկտը նպատակադրված է գտնելու միայն մեկ հստակ լուծում (զծային մոտեցում): Տարամետ մտածողությունը անձնավորությանը հնարավորություն է տալիս աշխատելու տարբեր ուղղություններով⁹: Տարա-

интереса у детей дошкольного возраста в различных видах деятельности. Сызрань, 2017 (<https://rescent-szn.minobr63.ru/wp-content/uploads/2015/07/Методические-рекомендации-по-развитию-познавательного-интереса-у-детей.pdf>):

⁸ «Առաջադրանքային կառավարման» վերաբերյալ հանգամանորեն տես *Պալաս Նիվենու*, Առաջադրանքային կառավարման և զորքերի կառավարման պարզաբանում: «ՀԲ», 2023, հմ. 4, նաև՝ *Ս. Վ. Հայրապետյան*, Զորքերի կառավարման արդիական եղանակը և ԶՈՒ-ում դրա ներդրման խոչընդոտները: «ՀԲ», 2023, հմ. 2:

^{*} Ամերիկացի հոգեբան Զոն Գիլֆորդը մարդկային մտածողությունը բաժանել է տարամետ ու զուգամետ տեսակների (տես *J. P. Guilford. The Nature of Human Intelligence. New York, 1967, PP. 138–185* (<https://gwern.net/doc/iq/1967-guilford-the-nature-of-human-intelligence.pdf>)):

⁹ *Տես В. М. Голубова, О. В. Исаакян. Особенности формирования смысловой дивергенции в процессе развития креативности студентов. «Северо-Кавказский психологический вестник», 2009, № 7/1* (<https://cyberleninka.ru/article/n/osobennosti-formirovaniya-smyslovoy-divergentsii-v-protssesse-razvitiya-kreativnosti-studentov/viewer>):

մետ մտածողությամբ օժտված մարդը փորձում է գտնել միևնույն խնդրի լուծման ոչ թե միակ ճիշտ ուղին, այլ բազմաթիվ ուղիներ: Այդպիսի մարդը զերծ է կարծրատիպներից, ուստի կարող է հղանալ շատ հետաքրքիր և ոչ ստանդարտ գաղափարներ: Տարամետ մտածողությանը բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները՝ ընկալման արագություն, մտքի պատկերավորություն ու ձկունություն, զգայունություն ու յուրահատկություն և ստեղծարարություն¹⁰:

Երբ դիտարկում ենք զուգամետ և տարամետ մտածողությունները, հարց է ծագում, թե որն է կարևոր: Այդ հարցին պատասխանելու համար, նախ, պետք է հասկանալ խնդիրների լուծման ընթացքում մտածողության սխեման և մեխանիզմը: Զուգամետ մտածողության դեպքում զինծառայողը իր առջև ծառայած խնդիրը լուծելու համար, հիմնվելով նախորդ փորձի կամ արդեն ձեռք բերված գիտելիքի վրա, կատարում է հետևյալ մտավոր գործողությունները՝ համեմատություն (օբյեկտների միջև տարբերությունների և նմանությունների պարզում), վերլուծություն (բարդ ամբողջի մտավոր տրոհում բաղադրամասերի), համադրում (առանձնացված մասերի միավորում՝ ամբողջի ստեղծմամբ), վերացարկում (անէական օբյեկտների հեռացում և օբյեկտի էական հատկությունների ու կապերի առանձնացում), ընդհանրացում (առարկաների և երևույթների խմբավորում ըստ վերացարկման ժամանակ առանձնացված էական հատկանիշների) և կոնկրետացում (մտավոր անցում ընդհանուրից մասնավորին)¹¹:

Տվյալ համակարգը հնարավորություն է տալիս լուծելու շատ խնդիրներ, սակայն գործնականում գոյություն ունեն այնպիսի բարդ իրավիճակներ, որոնց առաջացման պատճառն ու ռացիոնալ կարգավորումը հնարավոր չէ միանգամից գտնել, եթե անձնավորությունը հիմնվում է միայն իր նախկին գիտելիքների ու փորձի վրա: Հենց այդ փուլում է առաջանում անհրաժեշտություն որոնելու, թե պատճառները գտնելու համար ինչ պետք է անել և ինչ ուղղությամբ մտածել: Շատ խնդիրներ չեն կարող լուծվել պարզ եղանակով, այլ դրա համար հարկավոր է տարամետ մտածողություն: Սակայն զուգամետ մտածողության դերը չի կարելի անտեսել: Օրինակ՝ երբ անձնավորությունը առաջ է քաշում անսահման թվով գաղափարներ, հնարավոր է՝ այդպես էլ չկարողանա կողմնորոշվել, թե դրանցից որը պետք է զարգացնի առաջադրված խնդիրը լուծելու համար, և այս դեպքում օգնության է հասնում զուգամետ մտածողությունը:

Դերային մարզումներով առաջավարական որակների ձևավորում

Ինչպես արդեն նշել ենք, ժամանակակից մարտական գործողությունները հաճախ տեղի են ունենում այնպիսի արագ փոփոխվող պայմաններում, որ անձնակազմից պահանջվելու է մշտապես ցուցաբերել նախաձեռնողական ու ստեղծագործական մոտեցում, իսկ երբեմն նաև ինքնուրույն որոշում-

¹⁰ Տես «Конвергентное и дивергентное мышление» (<https://studfile.net/preview/16473330/page:25/>):

¹¹ Տես *А. Г. Маклаков*. Общая психология. СПб., 2001, с. 316; «Мышление» (<https://sgpi.ru/user/-287/umk/Мышление.pdf>):

ներ կայացնելու կարողություն: Մեծ թվով հետազոտողներ պնդում են, որ անհրաժեշտ է տարբեր մակարդակի զինվորական ստորաբաժանումներում պատրաստել առաջավարության որակներ ունեցող մի քանի զինծառայողների, որոնք ունակ լինեն արտակարգ իրավիճակում իրենց վրա վերցնելու շարունակվող մարտական գործողություններ կազմակերպելու և կառավարելու պատասխանատվությունը¹²: Ոչ մի հրամանատար չի կարող վստահ լինել, որ իր ենթակա զինծառայողներից ոմանք կարող են արտակարգ իրավիճակում ունենալ նման վարքագիծ, եթե նախապես նրանց հետ չի անցկացրել համապատասխան պարապմունքներ: Ուստի կարծում ենք, որ ռազմաուսումնական պարապմունքների ժամանակ նպատակահարմար է կիրառել դերային խաղերի մեթոդը: Այն որպես ինտերակտիվ մեթոդ, ուղղված է մասնագիտական գիտելիքների ու փորձի յուրացմանը: Ընդամին դերային խաղերի ժամանակ անհրաժեշտ է՝

- տարբեր պաշտոններ զբաղեցնող զինծառայողներին հանձնարարել ավելի բարձր պաշտոնների դերեր և մարզումներով նրանց մեջ զարգացնել տվյալ պաշտոնին անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ,
- ստորաբաժանումներում ամրապնդել զինծառայողների միջև հոգատարության, հարգանքի, փոխօգնության և մարտական ընկերասիրությանը բնորոշ վարքային նորմեր,
- զարգացնել փաստերը համակողմանիորեն և օբյեկտիվորեն վերլուծելու և համեմատելու, բարդ իրավիճակներում ոչ ստանդարտ ճիշտ որոշումներ ընդունելու և դրանք կատարելու ունակությունը,
- ամրապնդել իրենց ուժերի նկատմամբ վստահություն և այլն:

Անշուշտ դերային խաղերի ժամանակ էական նշանակություն ունի նաև իրավական նորմերին և ազգային զինվորական ավանդույթներին համահունչ աշխարհայացքի, արժեհամակարգի, համոզմունքների ձևավորումը: Ընդ որում, պետք է հատուկ ուշադրություն դարձնել մարտական ընկերների համար ու նրանց առջև անձնական պատասխանատվության ձևավորմանը:

Զինծառայողների փոխգործելիության զարգացում

Զինծառայողների մասնագիտական գործունեության ասպարեզում հաջողության հասնելու հավատը ավելի է ամրապնդվում, եթե առկա են հրամանատարների, ընկերների նկատմամբ վստահություն և անձնակազմի անդամների փոխգործելիության ապահովում: Հետաքրքիր է պարզել, թե ինչպես կարելի է զինվորական ստորաբաժանումում ապահովել այնպիսի միջավայր, որում փոխգործությանը բնորոշ լինի առավելագույնս մեծ սիներգետիկական ռազմավարական ուղղվածությունը, քանի որ փոխգործությունը կլինի ավելի

¹² Stu Alex J. Ramthun, Gina S. Matkin. Leading Dangerously: A Case Study of Military Teams and Shared Leadership in Dangerous Environments. "Journal of Leadership & Organizational Studies", 2014, Vol. 21, Issue 3, նաև՝ Ա. Ա. Նավասարդյան, Զինվորական կոլեկտիվներում համախմբվածության ցուցիչների սոցիալ-հոգեբանական բնութագրումը: «ՀԲ», 2024, հմ. 3:

արդյունավետ ու արդյունարար, եթե կառուցվի սիներգետիկ հենքի վրա¹³:

Ի դեպ, մտածողության տարածությունում սիներգիայի մասին խոսելիս չի կարելի շրջանցել նաև արհեստական բանականության ոլորտում վերջին տարիներին կատարված հետազոտությունների արդյունքները և մոդելավորման ասպարեզում տեղի ունեցած ձեռքբերումները: Սովորաբար մարդու մտածողության որոշակի պրոցեսներ փոխակերպվելով փոխադրվում են արհեստական բանականության դաշտ, մինչդեռ, կարծում ենք, նույնքան հիմնավորված է նաև հակառակ պրոցեսը: Ռեսուրսները մտածողության սիներգետիկայի երևույթները՝ հետազոտողը պետք է հաշվի առնի նաև սիներգետիկայի ցանցային մտածողությունը՝ այն դիտելով որպես դրա ճանաչողական հիմնավորման պրոցեսի խնդիրների համախումբ: Ընդամին այդ պրոցեսը պետք է հասկանալ որպես, մի կողմից, սիներգետիկայի և, մյուս կողմից, սուբյեկտիվ ու ինտերսուբյեկտիվ փորձի, այդ փորձի մոդելավորման ու դրանց զուգահեռ տեղափոխմանը (տրանսլյացիային) համապատասխանող հաղորդակցային տեխնոլոգիաների բազմապիսի ձևերով ներկայացվող շրջապատի բազմաչափանի կառուցվածքային զուգորդման պրոցես¹⁴:

Կարծում ենք՝ առաջին հերթին հարկ է անձնակազմի շրջանում ապահովել բարձր մակարդակի կարգապահություն և սերմանել գիտակցական կարգասիրություն՝ որպես անհատի ու կոլեկտիվի միջև սիներգետիկական առնչությունների ձևավորման անհրաժեշտ պայմանների:

Նկատենք, որ երբ խոսում ենք բանակային ստորաբաժանման կարգապահության և կազմակերպվածության մասին, պետք է հաշվի առնենք, որ 18 տարեկան երիտասարդի հետ անհրաժեշտ է վարել առավել նպատակամետ հոգեբանական աշխատանք, ընդ որում՝ ոչ միայն կանոնագրքերով նախատեսված ընդհանուր կարգապահության վերաբերյալ, այլև յուրաքանչյուր զինվորի անհատական կարգասիրության մասնաբաժնով: «Կարգապահությունը» և «կազմակերպվածությունը» ընդհանուր հասկացություններ են, որոնք պետք է այն աստիճանի տեղայնացվեն, այսինքն՝ յուրաքանչյուր զինվորի համար անհատականացվեն, որ գործնականում զինվորը լիովին հասկանա, որ իր կարգապահությունը հատկապես հենց իր անվտանգության ապահովման համար է, ուստի և նա պետք է հանուն դրա զսպի իր ներքին ըմբոստությունը, կամակոր դիմադրությունը և կեղծ ազատամտությունը: Իհարկե, ամեն ինչ սկսվում և վերջանում է նպատակի գիտակցմամբ, իսկ նպատակները տարբեր աստիճանակարգի են: Արդյո՞ք կարող ենք ծառայության բուն նպատակը յուրաքանչյուր զինվորի համար դարձնել այն աստիճանի հասկանալի, որ նա ներքնապես գիտակցի, որ երկրի անվտանգությունն առաջին հերթին

¹³ Տես, օրինակ, *В. А. Буланичев, Л. А. Серков. Синергетическое моделирование образовательных процессов. М., 2007, նաև՝ М. А. Терлеева. Синергетические эффекты в вопросах качества. «Литье и металлургия», 2016, № 3 (84):*

¹⁴ Տես *В. И. Аршинов. Синергетика как сетевое мышление. «Синергетика на рубеже XX–XXI в.»*, 2006 (<https://cyberleninka.ru/article/n/sinergetika-kak-setevoyemyshlenie>):

իր և իր ընտանիքի անվտանգությունն է: «Այո՛» պատասխանը տեղին և ընկալելի է, եթե «Ես»-ից սահուն անցում կատարենք «Մենք»-ի՝ միասին գործելու, փոխհամաձայնեցված գործողություններ կատարելու պայմանով:

Չենք կարող խոսել զինվորի «Ես»-ի և նրա անհատականության մասին առանց «Ես»-ի ընդհանրական իմաստը պարզելու: Հաճախ օգտագործվող «Ես» հայեցակարգը և «Ես»-ի պատկերը հոգեբանության մեջ նույնական են, մինչդեռ կան մասնագետներ, որոնք կարծում են, թե «Ես»-պատկերը «Ես»-հայեցակարգի միջուկն է: Բոլոր դեպքերում «Ես»-ը անհատի՝ իր մասին ունեցած պատկերացումներն են և հակազդումները նաև վարքի գնահատման տեսանկյունից:

Ի. Ս. Կոնը «Ես»-ի մեջ ներառում է մի քանի բաղադրիչներ. 1) ակտուալ «Ես»-ը (իր մասին մարդու ունեցած պատկերացումները), 2) հետահայաց «Ես»-ը (իր հաջողությունների և սոցիալական փորձի մասին պատկերացումները), 3) իդեալական «Ես»-ը (ինչպիսին է իրեն ուզում տեսնել ապագայում), 4) ռեֆլեքսիվ «Ես»-ը (պատկերացում այն մասին, թե ինչպես է շրջապատն իրեն ընկալում)¹⁵: Սովորական տրամաբանությունը հուշում է, որ «նպատակ–գործողություն–նպատակ» շղթան մշտապես մեր ուշադրության կենտրոնում է՝ որպես սիներգիայի իրագործման կարևորագույն պայման, եթե նախապես ընդունենք, որ զինվորի մոտակա և հեռագնաց նպատակները ոչ միայն բազմաթիվ են, այլև այնքան փոխկապված, որ դժվար է դրանք հստակ կերպով տարանջատել: Մինչդեռ միշտ չէ, որ զինվորները հասկանում են իրենց նպատակները, ավելի հաճախ դրանք սոսկ ցանկություններ են, որոնք երբեք չեն իրականանա, քանի որ ամրապնդված չեն համապատասխան շարժառիթավորմամբ գործողություններով: Դա նշանակում է, որ առաջնահերթը նպատակաստեղծ գործընթացի կազմակերպումն է հատուկ սոցիալ-հոգեբանական վարժանքների միջոցով, որոնք կարող են կազմակերպվել ուսումնական պարապմունքների ժամանակ: Սակայն սկզբում պետք է պարզել ռեֆլեքսիվություն դրսևորելու զինծառայողի կարողունակությունը, քանի որ բանակին պետք է շրջապատում կատարվող իրադարձության, ուրիշների զգացմունքների, հույզերի և վարքի վերլուծությունը հասկացող և գնահատող զինծառայող:

Ինչ վերաբերում է ինքնառեֆլեքսիային, ապա կարող ենք պնդել, որ այն ցույց է տալիս զինծառայողի մտքերի և հույզերի, վարքի, բնավորության, հակումների և անձնային այլ գծերի, արժեքների գիտակցումը և ներքին դրդիչներով կողմնորոշվելու կարողությունը: Անհատական ռեֆլեքսիվության չափման մեթոդիկայի համաձայն՝ կարող ենք պատկերացում կազմել ինչպես զինվորի գործունեության (անցյալ, ներկա և ապագա), այնպես էլ այլ մարդկանց հետ շփման և փոխգործության մասին: Համապատասխան թեստը հեշտ կիրառելի է նաև զինվորական ստորաբաժանումներում: Հաշվառելով յուրաքանչյուր զինծառայողի անհատական տվյալները՝ կարող ենք ստանալ տվյալ ստորաբաժանման ռեֆլեքսիվության դրսևորման միջինացված պատ-

¹⁵ Ств И. С. Кон. Психология ранней юности. М., 1989:

կեր, ինչը գործունակության զարգացման համար լայն հնարավորություններ կընձեռի սիներգիայի, այսինքն՝ փոխհամաձայնեցված և գիտակցված գործողությունների մասին:

Ամփոփում

Թեև ժամանակակից պատերազմներում կիրառվող նոր տեխնոլոգիական միջոցները փոխել են պատերազմի բնույթը, սակայն հաղթանակի ձեռքբերման գործում մարդկային գործոնը շարունակում է պահպանել իր առաջնային նշանակությունը: Հետևաբար ԶՈՒ-ի անձնակազմի հոգեբանական պատրաստման եղանակները պետք է մշտապես կատարելագործվեն՝ մասնագիտական գիտելիքների հարստացման, հմտությունների և ստեղծագործական կարողությունների զարգացման ուղղությամբ: Այդպիսով՝ դրա շնորհիվ կմեծացվեն մարտական առաջադրանքի արդյունավետ կատարման հնարավորությունները և կնվազեցվի հոգեխոցիչ գործոնների ազդեցությունը: Սակայն դա բավարար պայման չէ, եթե անձնակազմում ձևավորված չեն սիներգետիկական փոխգործությունը, իսկ առաջավարին բնորոշ որակներին տիրապետում է միայն հրամանատարական անձնակազմը:

МЕТОДЫ ПСИХОЛОГИЧЕСКОЙ ПОДГОТОВКИ ВОЕННОСЛУЖАЩИХ В ВОИНСКИХ ПОДРАЗДЕЛЕНИЯХ

Յ. Ժ. ԱՏԱՐՅԱՆ, полковник запаса, кандидат психологических наук, доцент, начальник Отдела военно-научного редактирования ВНЖ «Айккан банак» НИУО МО РА; В. С. КАРАПЕТЯՆ, доктор психологических наук, профессор, главный редактор журнала «Научный вестник» АГПУ, член Научно-консультационного совета ВНЖ «Айккан банак» НИУО МО РА

РЕЗЮМЕ

Все войны отличаются по своим целям, характеру, способам ведения, и тем не менее влияние психологического фактора на их исход не снижается. Психотравмирующие факторы боевой обстановки могут стать для военнослужащих «психологической драмой», и лишь путем обеспечения высокого уровня боевой и психологической подготовки возможно формирование устойчивого противодействия этим факторам. Следовательно, насущной является проблема постоянного совершенствования способов психологической подготовки личного состава **с** нацелом на обогащение специальных знаний, формирование профессиональных навыков и творческого подхода к решению боевых задач. При этом развитие творческого мышления не возможно без учета конвергентности и дивергентности мышления данного индивида. Необходима также подготовка в подразделениях нескольких военнослужащих, обладающих качествами лидера и способных в

чрезвычайных ситуациях взять на себя функции руководства подразделением с распределенной ответственностью.

Таким образом, благодаря психологической подготовке возрастут возможности результативного выполнения боевой задачи и снизится воздействие психотравмирующих факторов. Однако это необходимое, но не достаточное условие, если среди членов личного состава не будет сформировано синергетическое взаимодействие, а характерными лидеру качествами будет наделен лишь командный состав.

METHODS OF SERVICEMEN'S PSYCHOLOGICAL TRAINING IN MILITARY UNITS

*Z. D. ASATRYAN, Colonel (Res.), PhD in Psychology, Associate Professor, Head, Defense-Academic Editing Department, "Haikakan Banak" DAJ, NDRU, MOD, RA,
V. S. KARAPETYAN, Doctor of Psychology, Professor, Editor-in-Chief, "Scientific Bulletin" Journal, ASPU, Member, Academic-Advisory Council, "Haikakan Banak" DAJ, NDRU, MOD, RA*

SUMMARY

All wars differ in their goals, nature, methods of conduct, and yet the influence of the psychological factor on their outcome does not decrease. Psychologic traumatic factors of the combat situation can become a «psychological drama» for servicemen, and only by ensuring a high level of combat and psychological training it is possible to form a sustainable counteraction to these factors. Consequently, the urgent problem is the constant improvement of ways of psychological training of the personnel, targeted at enriching special knowledge, developing professional skills and a creative approach to solving battle tasks. At the same time, the development of creative thinking is not possible without taking into account the convergence and divergence of thinking of a given individual. It is also necessary to train several servicemen in sub-units, those with leadership qualities and who are capable of taking on the functions of leading a unit with distributed responsibility in emergency situations.

Thus, owing to psychological preparation, the possibilities for efficaciously performing a battle task will increase and the impact of psychologic traumatic factors will decrease. However, this is a necessary, but not a sufficient condition if synergistic interaction is not formed among the personnel members, and only the command staff is endowed with the qualities characteristic of a leader.